

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«21» 01 20.. թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահությունը ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, ի դեմս տնօրեն Տիգրան Զաքարյանի (այսուհետ՝ Կազմակերպություն)) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 175322,7 (հարյուր յոթանասուն հինգ միլիոն երեքհարյուր քսան երկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը Ծրագրի առաջադրանքը, այդ թվում նպատակը, օրացուցային պլանը, այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 ջնդրունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6-րդ** մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ-ին հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 Կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 Աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ-ին,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը:

Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ- ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 175322,7 (հարյուր յոթանասուն հինգ միլիոն երեքհարյուր քսան երկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ,:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ.

բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի 24

Հ/հ 900011024115, Ֆինանսների նախարարության գանձապետական գործառնությունների վարչություն

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝



ՈՍԳՐԿ ՍԱՐՏԻՈՒՅԱՆ




ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ

0203 Աշտարակ, Ալիխանյան եղբ., 1


Հ/հ 900448000407, Ֆինանսների նախարարության գանձապետական գործառնությունների վարչություն

ՀՎՀՀ 05001265

Տնօրեն, ծրագրի գիտական ղեկավար՝



ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ



Հավելված 1
« 21 » 01 2020թ.
N 2-5 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ Նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի տնօրեն Տիգրան Զաքարյանը վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 21 » 01 2020թ. N 2-5 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 175322,7 (հարյուր յոթանասուն հինգ միլիոն երեքհարյուր քսան երկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:


ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի 24

Հ/հ 900011024115, Ֆինանսների նախարարության գանձապետական գործառնությունների վարչություն ԲԸ

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝




ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ

0203 Աշտարակ, Ալիխանյան եղբ., 1


Հ/Հ 900448000407, Ֆինանսների նախարարության գանձապետական գործառնությունների վարչություն

ՀՎՀՀ 05001265

Տնօրեն, ծրագրի գիտական ղեկավար՝



ՏԻԳՐԱՆ ԶԱԶԱՐՅԱՆ



Հավելված 2
« 21 » 01 20.. թ.
N 2-5 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:
2. **Աշխատանքի նպատակը՝** Հիմնարար և կիրառական գիտահետազոտական աշխատանքների կատարման արդյունքում նոր գիտական արդյունքների ստացում և գիտատեխնիկական մշակումների իրականացում:
3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները՝**
 - 3.1 Նախատեսված հետազոտությունները և մշակումները պետք է ուղղված լինեն բնագավառի կարևոր արդի և հեռանկարային խնդիրների լուծմանը:
 - 3.2 Դրված խնդիրների լուծման համար պետք է կիրառվեն ժամանակակից հուսալի մեթոդներ, որոնք կապահովեն արդյունքների հուսալիությունը:
 - 3.3 Հիմնարար հետազոտությունների արդյունքները հնարավորին չափ պետք է ուղիներ և հնարավորություններ բացահայտեն նոր էֆեկտիվ տեխնիկական միջոցների և սարքավորումների ստեղծման համար:
 - 3.4 Կիրառական մշակումները պետք է կիրառեն և ընդգրկեն ժամանակակից ինովացիոն բարձր տեխնոլոգիական լուծումներ:
4. **Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):**

Սույն պայմանագրով նախատեսվող աշխատանքները հանդիսանում են ՌՖԷԻ-ում 2016-2020թ.թ. բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական հետազոտությունների և մշակումների ծրագրի հինգերորդ փուլը: Նշված ծրագրով աշխատանքները կատարվելու են հետևյալ ուղղություններով:

Ուղղություն 1.

Գերբարձր հաճախությունների և տեռահերցային ալիքների ճառագայթումը և ընդունումը, մետանյութերում, ֆոտոնային բյուրեղներում և պլազմայում տարածումը, դաշտերի արտապատկերման և ազդանշանների սինթեզի, զտման և արագագործ թվային մեթոդների և հանգույցների ստեղծումը: Նոր մեթոդների, տեխնիկական միջոցների և համակարգերի մշակումը ռադիոլոկացիայում, տեխնոլոգիական հսկման և դիագնոստիկայի, շրջակա միջավայրի հեռազննման, բժշկա-կենսաբանական, սեյսմաբանական և այլ կիրառումների համար:

Ուղղություն 2.

Բարակաթաղանթային կիսահաղորդչային հետերակառուցվածքների և ցածր չափայնությամբ համակարգերի (նանոլարերի, նանոկետերի) հիմնարար հետազոտությունները՝ արևային էներգիայի բարձր էֆեկտիվության փոխակերպիչների, ճառագայթիչների, դետեկտորների և այլ էլեկտրոնային սարքերի ստեղծման նպատակով: Այլ կոնդենսացված նյութերի (պինդ մարմիններում էլեկտրոնային գազերի, հեղուկներում նանոմասնիկային խառնուրդների) ուսումնասիրումը:

2020 թվին նշված երկու ուղղություններով կկատարվեն հետևյալ աշխատանքները.

Ուղղություն 1-ով

- Ուղղվածության դիագրամի երկչափ ղեկավարմամբ թվային անտենային ցանցերի մշակման հնարավորության ուսումնասիրում: Նախատեսվում է հետազոտել և մշակել երկու անկախ օրթոգոնալ ուղղությունների ղեկավարվող միկրոշերտային անտենային ցանցի երկրաչափությունը և սնուցման սխեման: Ուսումնասիրել նման անտենաների բևեռացման բնութագրերը և ռադարային համակարգերում կիրառման հնարավորությունները:
- Փոքր ծավալներում օպտիմալ միկրոալիքային տաքացում ապահովող էլեկտրադինամիկական կառուցվածքների հետազոտում: Աիրաժեշտ է կատարել տաքացման մեխանիզմների հետազոտումը զանազան նյութերում, կախված միկրոալիքային ճառագայթման հաճախությունից, ինչպես նաև մշակել համապատասխան ջերմության ուղղակի արտադրության ապլիկատորներ: Հետազոտել ԳԲՀ միկրոտաքացուցիչների կիրառումը բժշկության, քիմիայի և այլ ոլորտներում:
- Ֆոտոնային բյուրեղներում լույսի ուղղման և նրա բևեռացման կտրուկ փոփոխության ուսումնասիրումը: Լույսի գաղտնապահման հետազոտումը բեկման ցուցչի հատուկ կոորդինատային կախվածություն ունեցող միջավայրերում:
- լիցքավորված մասնիկների հզոր փնջերի անկայունությունների և նրանց հնարավոր փոխակերպումների պայմանների և դինամիկայի հետազոտումը պլազմայում:
- Էլեկտրամագնիսական կիլվատերային ալիքների գրգռումը պինդ-մարմնային խտության պլազմայում ռեյատիվիստիկ էլեկտրոնային փնջերով, մեծ ինտենսիվության մղող գերկարճ լազերային իմպուլսի դաշտում:
- Հետազոտել պինդ մարմնային պլազմայից գերպայծառ ռեյատիվիստիկ էլեկտրոնային փնջերի ստացման հնարավորությունը ուլտրառեյատիվիստիկ ինտենսիվության լազերային իմպուլսներով:
- Ունակայաին կապով «սառը» ռադիոհաճախականային պլազմայի օպտիկական տեսանելի տիրույթի սպեկտրալ առանձնահատկությունների ուսումնասիրումը և նրանց փողկապակցվածությունը պլազմայի սնման ռադիոհաճախականային հզորության հետ: Ուսումնասիրել պլազմայի իմպեդանսի հզորությունից և խցիկի գազի ճնշումից կախվածությունների հիստերեզիսային բնույթը (երկկայուն վիճակներ), ինչպես նաև պլազմայում պարպման առաջացման պայմանները: Առաջարկվում է որպես պարպման հայտնաբերման չափանիշ օգտագործել պլազմայի էլեկտրական իմպեդանսը:

- Ուղղահայաց մագնիսական դաշտում երկչափ էլեկտրոնային գազի Հոլլի հաղորդականության վրա արտաքին հաճախականության ազդեցության ուսումնասիրումը:
- ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի Սարավանդ և ԼՂՀ Շուշի քաղաքի փորձակայաններում տեղակայված 4,2մ ալիքի երկարության ռադիոդիտակների միջոցով իոնոսֆերայի ուղղահայաց զոնավորմամբ կատարվելու են Կարապ-Ա և Կասիոպեա-Ա դիսկրետ կետային ռադիոաղբյուրի ճառագայթման հոսքերի շուրջօրյա գրանցումների իրականացումը, ինչպես նաև Կասիոպեա-Ա տիեզերական ռադիոաղբյուրի հոսքի նվազման բնույթի պարզաբանումը:
- ՌԴ ԳԱ կիրառական աստղագիտության ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի միջև գիտական համագործակցության շրջանակներում 2020թ. իրականացնել ГЛОХААС համակարգի Սանկտ-պետերբուրգում տեղակայվող PT-13 ИПА РАИ ռադիոդիտակի ֆոկուսավորման և հաճախությունների (2,2 – 2,6) ԳՀց, (7,0 – 9,5) ԳՀց և (28 – 34) ԳՀց. տիրույթներում բնութագրերի չափման աշխատանքները՝ ՌՖԷԻ-ում մշակված ծրագիր/մեթոդի օգնությամբ:

Ուղղություն 2-ով

- Մեծ մակերեսի CuZnSnSe₂ բարակ թաղանթային արևային տարրերի տեսական և փորձարարական հետազոտում
- Կիսահաղորդչային նանոլարերի վրա հիմնված արևային մարտկոցներում ընթացող գեներացիոն- ռեկոմբինացիոն և ֆոտոէլեկտրական երևույթների հետազոտում, նանոլարային ֆոտոընդունիչների և դաշտային տրանզիստորների տեսական հետազոտում:
- Միջին ինֆրակարմիր տիրույթի միատարր և բազմատարր հետերոանցումային կոորդինատագայուն ֆոտոընդունիչների, դրանց վրա հիմնված պասիվ հետևող ավտոմատ համակարգերի օպտիկա-մեխանիկական հանգույցի ստեղծում և բնութագրերի հետազոտում
- Ցածր չափայնության համակարգերի ֆիզիկայի կիրառական բնույթի հետազոտությունների արդյունքների ստացման տեխնոլոգիաների մշակման և ստացված նանոկառուցվածքների ֆիզիկական հատկությունների համակողմանի ուսումնասիրման նյութատեխնիկական բազայի զարգացում.
- Լազերային փոշեցրման եղանակով նստեցված MoS₂ երկչափ մոնոշերտերի և դրանց հիման վրա ստեղծված MoS₂/InSb հետերոանցումների ֆոտոէլեկտրական հատկությունների հետազոտում:
- Նանոլարային իոնազգայուն դաշտային տրանզիստորների /ԴՏ/ -ի համապարփակ մոդելավորում



ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի
ինստիտուտի տնօրեն,
ծրագրի գիտական ղեկավար”

ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«ՀՀ ԳԱԱ Ռ-ՖԷԻ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետները	Պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	Փուլ 1	Ծրագրով նախատեսված հետազոտությունների համար անհրաժեշտ գիտատեխնիկական ինորմացիայի (գրականության, նմա-նակների և այլ) և նրանց իրականացման մեթոդների ընտրում և մշակում	Ինֆորմացիայի ամփոփում	Խնդիրների և նրանց լուծման մեթոդների հրստակետում	01.01.2020-31.03.2020	35064,5
2.	Փուլ 2	Հետազոտությունների սկզբնական փուլերի կատարում, տեսական և էքսպերիմենտալ աշխատանքների ծավալում, փորձնական նմուշների նախագծում	Տեսական հետազոտություններ, էքսպերիմենտալ չափումներ	Հաշվետվություն, տեխնիկական լուծումներ	01.04.2020-30.06.2020	43831,0
3.	Փուլ 3	Հետազոտությունների հիմնական ծավալ-ների իրականացում, տեխնոլոգիական նմուշների պատրաստում	„	Հաշվետվություն, նմուշների փորձարկում	01.07.2020-30.09.2020	43831,0
4.	Փուլ 4	Արդյունքների ամփոփում, գիտական հրապարակումների պատրաստում և ներկայացում, նմուշների փորձարկումների ակտերի պատրաստում	Արդյունքների ամփոփում	Գիտ. հրապարակումներ, նմուշների փորձարկումների ակտեր	01.10.2020-30.12.2020	52596,2
Ընդամենը						175322,7

ՀՀ ԳԱԱ Ռ-ադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի
ինստիտուտի տնօրեն,
ծրագրի գիտական ղեկավար՝

ՏԻԳՐԱՆ ԶԱԲԱՐՅԱՆ



* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով


ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՀՀ ԳԱԱ Ռ-ՖԷԻ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ


Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	139500,0	34875,0	34875,0	34875,0	34875,0
2	տնտեսական և այլ ծախսեր*	35822,7	189,5	8956,0	8956,0	17721,2
ԸՆԴԱՄԵՆԸ		175322,7	35064,5	43831,0	43831,0	52596,2

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ տնօրեն՝


(ստորագրություն)

(ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ)
(անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

(ՆՎԱՐԴ ԶՈՐՅԱՆ)
(անուն ազգանուն)




* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման արժեքի 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ արժեքի 5%-ը

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †


Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	29320,0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	12000,0
	գազի ծառայություն	7500,0
	ջրամատակարարման ծառայություն	1200,0
	կապի ծառայություն	1000,0
	աղբահանություն	120,0
	Տրանսպորտային վառելիքի ծախսեր	7500,0
2	Գույք	-
3	Սարքեր և սարքավորումներ	2400,0
4	Նյութեր	1500,0
5	Գործուղումներ	300,0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	1500,0
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	200,0
9	Այլ ծախսեր.....	602,7
Ընդամենը		35822.7

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի
 ինստիտուտ տնօրեն՝


 (ստորագրություն)

(ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ)
 (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

(ՆՎԱՐԴ ԶՈՐՅԱՆ)
 (անուն ազգանուն)

* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի
պահպանում և զարգացում » ծրագրի
(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձի չափը, ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Զաքարյան Տիգրան Վանիկի	տնօրեն	Ֆ.մ.գ.թ	220,0
2	Մարտիրոսյան Ռադիկ Մարտիրոսի	տն. խորհրդ.	Ֆ.մ.գ.դ	156,0
3	Ասմարյան Էմիլ Արշակի	փոխտնօրեն գ.հ.	Ֆ.մ.գ.թ	200,0
4	Վարդանյան Վահան Հրանտի	փոխտնօրեն ընդ.հ.		180,0
5	Եսայան Աշխեն Էդվարդի	գիտ. քարտուղար	Ֆ.մ.գ.թ	140,0
6	Դադայան Կարեն ԱԱնդրանիկի	գլխ. ճարտարագետ		120,0
7	Զորյան Նվարդ Ժիրայրի	գլխ. հաշվապահ		160,0
8	Պետրոսյան Մագդա Գրիգորի	հաշվապահ		150,0
9	Մնացականյան Անահիտ Աղաջանի	առ. ճարտ.-ռեֆ.		135,0
10	Զաքարյան Սուրեն Էդուարդի	1-ին բաժնի պետ		130,0
11	Գրիգորյան Եվա Հայկի	տն. օգն.		92,7
12	Գյոզայան Բելլա Գառնիկի	կադ. բաժ.վ.		95,0
13	Բաբայան Գայանե Գրիգորի	ավ.հաշվապահ		92,0
14	Ազիզյան Հասմիկ Ռուբենի	գանձապահ		89,7
15	Զախարյան Սվետլանա Ալեքսանդրի	քարտուղար		89,7
16	Մարտիրոսյան Մարիետա Սերգեյի	տաբելավար		89,7
17	Բալասանյան Վեներա Նելսոնի	իրավաբան		92,7
18	Ղուլյան Ալբերտ Գարեգինի	լաբ.վար.	Ֆ.մ.գ.դ	130,0
19	Փիրումյան Համլետ Արագի	առաջ. գիտաշխ.	տ.գ.դ.	120,0
20	Արաբաջյան Գուրգեն Լևոնի	կ.գ.ա.		92,7
21	Միրզոյան Գեղեցիկ Գուրգենի	ճարտարագետ		89,7
22	Տոնոյան Նաիրի Արամայիսի	ճարտարագետ		90,0
23	Առաքելյան Հասմիկ Ստեփանի	ճարտարագետ		89,7
24	Եզակյան Նարեկ Դավթի	լաբորանտ		92,7
25	Մանասեյան Խաչիկ Հայկազի	գիտաշխատող		90,0
26	Գաբրիելյան Անուշավան Պողոսի	ճարտարագետ		92,7
27	Ղլիջյան Արթուր Ռազմիկի	տեխնիկ		89,7
28	Սարգսյան Սուրեն Ամիրբարի	առաջ.ճարտարագետ		105,0
29	Հախումյան Արսեն Ալեքսանդրի	Լաբ.վարիչ	Ֆ.մ.գ.դ	220,0
30	Սարգսյան Ռոբերտ Աշոտի	ավ. գիտաշխատող	տ.գ.թ.	73,0(ոչ/լ)
31	Պողոսյան Նուբար Գյուլբանգի	գիտաշխատող		140,0
32	Ստեփանյան Իրինա Դավիդի	ճարտարագետ		89,7
33	Հայրապետյան Վլադիմիր Ռազմիկի	ճարտարագետ		120,0
34	Արշակյան Լիլիթ Գևորգի	ճարտարագետ		92,7
35	Մովսիսյան Լարիսա Շավարշի	լաբորանտ		90,0
36	Ավետիսյան Հովսեփ Նվերի	գիտաշխատող		100,0
37	Հիվսեփյան Բենիկ Լալազարի	ճարտարագետ		89,7
38	Դադայան Մանյա Երվանդի	ճարտարագետ		89,7
39	Խաչատրյան Ռոբերտ Ժորայի	ավ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ	100,0
40	Նիկիտին Ալեքսանդր Յուրիի	տեխնիկ		92,7

41	Եղիգարյան Մաքսիմ Ժորայի	ճարտարագետ		92,7
42	Մարտիրոսյան Հասմիկ Վալերիի	ճարտարագետ		92,7
43	Դավիդյան Նարինե Վալերիի	կ.գ.ա.		50,0(նշ/լ)
44	Մելիքյան Ռազմիկ Լյուդվիգի	առ.ճարտարագետ		89,7
45	Մադոսյան Լևոն Վարշամի	առ.ճարտարագետ		89,7
46	Մուսաբեյլան Աշոտ Սուրենի	ավ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ	115,0
47	Ավետիսյան Ռուբեն Մայիսի	ճարտ.-տեխնոլոգ		62,4(նշ/լ)
48	Մարգարյան Արծրուն Վարուժանի	լաբորանտ		92,7
49	Ներսեսյան Սուրեն Ռուբենի	կ.գ.ա.	Ֆ.մ.գ.թ	92,7
50	Մաթևոսյան Հրանտ Հենրիկի	լաբ.վար.	Ֆ.մ.գ.դ	73,0(նշ/լ)
51	Ռոստոմյան Էդուարդ Վարդգեսի	առաջ. գ.ա.	Ֆ.մ.գ.դ	100,0
52	Գևորգյան Ժիրայր Սերգեյի	ավ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.դ	75,0(նշ/լ)
53	Հովակիմյան Լևոն Բախտիարի	ավ. գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ	100,0
54	Պետրոսյան Ստեփան Գրիգորի	առաջ. գ.ա.	Ֆ.մ.գ.դ	97,0
55	Ավջյան Կարապետ Էդուարդի	ավ.գիտաշխատող	Ֆ.մ.գ.թ	120,0
56	Խաչատրյան Աշոտ Մանուչարի	գիտաշխատող		89,7
57	Մկրտչյան Համբարձում Գեղամի	ճարտարագետ		92,7
58	Մաթևոսյան Լենրիկ Արշալույսի	գիտաշխատող		95,0
59	Պլուզյան Գայանե Վարդանի	ավ.ճարտարագետ		89,7
60	Կարապետյան Գագիկ Կարապետի	ավ.ճարտարագետ		90,0
61	Մարտիրոսյան Ստեփան Գեղամի	գիտաշխատող		110,0
62	Հարությունյան Վարդգես Հարությունի	ռ/ս կարգ.		89,7
63	Թորիկյան Զուլիետա Ռ.	ճարտարագետ		89,7
64	Առաքելյան Նարեկ Վարդանի	ավ.ճարտարագետ		92,7
65	Թոքմաջյան Աննա Սերգեյի	ճարտ.տեխնոլոգ		89,7
66	Պետրոսյան Զուլիետա Վլադիմիրի	տեխնոլոգ		89,7
67	Եղիգարյան Սուսաննա Հովհաննեսի	տեխնիկ		89,7
68	Հասրաթյան Անժելա Հենրիկի	տեխնիկ		89,7
69	Պետրոսյան Վահրամ Փիլոսի	տեխնիկ		50,0(նշ/լ)
70	Գյոզալյան Ստեփան Սայադի	կոնստր.ճարտ.		100,0
71	Մովսիսյան Անահիտ Շավարշի	պահեստապետ		92,7
72	Բախշյան Բուրաստան Շմավոնի	գրադարանի վարիչ		89,7
73	Առաքելյան Քրիստինե Վանուշի	ճարտարագետ		92,7
74	Գալստյան Տիգրան Վանուշի	գարաժի վարիչ		89,7
75	Շառոյան Դերենիկ Մուշեղի	վարորդ		118,5
76	Արամյան Կարապետ Ժորայի	վարորդ		118,5
77	Անտոնյան Մամբրե Սերգեյի	գլխ. էներգետիկ		110,0
78	Հասրաթյան Հենրիկ Շաքարի	բանվոր		89,7
79	Կիրակոսյան Մուշեղ Կիրակոսի	բանվոր		89,7
80	Գալստյան Բենիամին Վոլոդյաի	բանվոր		89,7
81	Ալեքսանյան Հովիկ Զավենի	գագ.եռակցող		89,7
82	Մաղաքյան Սասուն Կարապետի	էլ.մոնտյոր		89,7
83	Միքաելյան Արտաշես Խաչիկի	կաթս.ավ.օպերատ.		131,8
84	Գասպարյան Խոսրովիկ Արամի	կաթս. օպերատ.		106,8
85	Սոնյան Հովհաննես Կարապետի	կաթս. օպերատ.		106,8
86	Առաքելյան Հովհաննես Մնացականի	կաթս. օպերատ.		106,8
87	Օհանով Էդուարդ Արտաշեսի	պարետ		45,5(նշ/լ)
88	Հասրաթյան Ամալիկ Հայրապետի	հավաքարար		89,7
89	Մանուկյան Մարինե Մանուկի	հավաքարար		60,0(նշ/լ)
90	Գևորգյան Հասմիկ Ապրեսիկի	հավաքարար		46,0(նշ/լ)
91	Հակոբյան Գյուլնարա Ռաֆիկի	հավաքարար		46,0(նշ/լ)
92	Նասիբյան Սուսաննա Ալյոշայի	հավաքարար		62,0 (նշ/լ)
93	Եղիգարյան Ժորա Փարավոնի	ֆրեզերագործ		104,7
94	Մարտիրոսյան Վալերի Միքայելի	ֆրեզ.-կոորդին.		104,7

95	Ղոնախցյան Վարդգես Հարությունի	խառատ		89,7
96	Կարապետյան Գնել Մկրտչի	փականագործ		104,7
97	Մինասյան Ֆելուշ Արշալույսի	խառատ		104,7
98	Պետրոսյան Անդրանիկ Սոսի	ֆրեզերագործ		92,7
99	Միքայելյան Արմեն Անտոնի	ֆրեզերագործ		92,7
100	Պետրոսյան Հրաչիկ Սեդրակի	պահակապետ		50,0(ոչ/լ)
101	Դավթյան Վազգեն Ստեփանի	պահակ		101,4
102	Հովսեփյան Հովսեփ Ռզզոյի	պահակ		101,4
103	Դադբաշյան Անդրանիկ Գալուստի	պահակ		101,4
104	Հովհաննիսյան Ավետիք Աղասիի	պահակ		101,4
105	Նահապետյան Գագիկ Բալաբեկի	պահակ		101,4
106	Պետրոսյան Ամլետ Մարդիի	պահակ		101,4
107	Բաբայան Սամվել Արամայիսի	պահակ		101,4
108	Բաբայան Գրիգոր Սամվելի	պահակ		104,8

« ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի
ինստիտուտ տնօրեն »



(Handwritten signature)
(ստորագրություն)

(ՏԻԳՐԱՆ ՋԱՔԱՐՅԱՆ)
(անուն ազգանուն)